# ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃՎԵԼ Է

03.12.2013 19:33

Փաստաբանների պալատի փաստաբան Լևոն Գյուլումյանը, որի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել, արդեն քրեական պատասխանատվության չի ենթարկվի: Գյուլումյանը, հիշեցնենք, մեղադրվում էր առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ ապացույցներ կեղծելու համար:

Փաստաբանների պալատի լրատվական ծառայությունից Panorama.am-ին տեղեկացնում են, որ նրա նկատմամբ հարուցված քրեական գործը` ՀՀ քրեական օրենսգրքի 349 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կարճվել է` նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Բանն այն է, որ ըստ նախաքննական մարմնի, Լևոն Գյուլումյանը թմրամիջոց իրացնելու համար մեղադրվող Վաչագան Զաքարյանի շահերի պաշտպանությունն իրականացնելու ընթացքում ապացույց է կեղծել:

Սակայն ոստիկանության Արմավիրի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Վ. Տիգրանյանի նոյեմբերի 28-ի որոշմամբ, փաստաբանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է:

Նախորդ նորությունը: ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻՆ

Հաջորդ նորությունը: ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻՆ

## Առաջարկվող նորություններ



22.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



26.11.2013ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



18.12.2013ՄԵԿ ՏԱՐՈՒՄ՝ 9-Ը ԱՐԴԱՐԱՑՈՒՄ. ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ 2013-Ը ԱՆՆԱԽԱԴԵՊ ՏԱՐԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ



20.12.2013ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })